



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հունվարի 2023 թվականի N 78 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 665-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ, 33-րդ հոդվածի 9-րդ, 9.1-ին, 35-րդ հոդվածի 15-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 665-Ն որոշման (այսուհետ՝ որոշում)՝

1) նախաբանում «և 48-րդ հոդվածների» բառերը փոխարինել «, 48-րդ հոդվածների և 2019 թվականի դեկտեմբերի 20-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի» բառերով.

2) 1-ին կետի 3-րդ ենթակետում «ինչպես նաև» բառերը փոխարինել «2023 թվականի հունվարի 1-ից՝ հարկադիր կատարողների զինվորական կենսաթոշակները և» բառերով:

3) 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 18-րդ ենթակետով՝
 «18) 2019 թվականի դեկտեմբերի 20-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրին համապատասխան՝ կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակը վճարելու և կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգը, աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող ստաժը հաշվարկելու կանոնները, կենսաթոշակի վճարման առանձնահատկությունները՝ համաձայն N 18 հավելվածի:»:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.2-րդ կետով՝
 «2.2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ մինչև 2023 թվականի փետրվարի 20-ը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությանը փոխանցել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության համակարգի կենսաթոշակառուների կենսաթոշակի գործերը:»:

2. Որոշման N 1 հավելվածում՝

1) 14.5-րդ կետում «(առանց ենթակա կազմակերպությունների)» բառերը փոխարինել «, դրանց ենթակա դպրոցներում, գրադարաններում, բնակչահագործման (բնակարանային շահագործման) գրասենյակներում (տեղամասերում, տնտեսություններում)» բառերով:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14.6-րդ կետով՝
 «14.6. 1992 թվականի հունվարի 1-ից մինչև 2004 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթ չի պահանջվում, եթե անձն աշխատել է (գրադեցրել է պաշտոն) քաղաքացիական ավիացիայի գործարաններում և կազմակերպություններում, ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի

5-ի N 665-Ն որոշման NN 6, 7 հավելվածներում նշված կազմակերպություններում՝ անկախ այդ կազմակերպությունում զբաղեցրած պաշտոնից կամ կատարած աշխատանքից:».

3) 15.4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«15.4. Աշխատանքային ստաժում հաշվառվում է 1992 թվականի մարտի 13-ի «Կենսաթոշակային ապահովության բնագավառում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին» համաձայնագրի՝ 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ մասնակից հանդիսացող պետության տարածքում մինչև 2017 թվականի հունվարի 1-ն աշխատանքային գործունեության ժամանակահատվածը:».

4) 15.5-րդ կետում «այն ժամանակահատվածը, որի համար, ըստ բազայի տվյալների, ապահովադիրը կատարել է սոցիալական վճարներ» բառերը փոխարինել «ժամանակահատվածը, բայց ոչ ավելի, քան բազայում առկա տեղեկատվությամբ սոցիալական վճար կատարած վերջին ամսաթիվը» բառերով.

5) 19.4-րդ կետը և 40-րդ կետի 1-ին ենթակետը «Պետական պաշտոններ» բառերից հետո լրացնել «և պետական ծառայության պաշտոններ» բառերով.

6) 34-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«34. Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն մշտական ​​բնակության ժամանած անձին կենսաթոշակ է նշանակվում և վճարվում՝

1) Ռուսաստանի Դաշնությունում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու (կենսաթոշակ չվճարելու) ամսվա 1-ից, եթե անձը Հայաստանի Հանրապետությունում հաշվառվել է Ռուսաստանի Դաշնությունում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու (կենսաթոշակ չվճարելու) ամսվանից հաշված՝ 6 ամսվա ընթացքում և կենսաթոշակ նշանակելու համար դիմել է հաշվառման օրվանից հետո՝ 3 ամսվա ընթացքում.

2) դիմելու օրվանից, եթե անձը Հայաստանի Հանրապետությունում հաշվառվել է Ռուսաստանի Դաշնությունում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու (կենսաթոշակ չվճարելու) ամսվանից հաշված՝ 6 ամսվա ընթացքում և կենսաթոշակ նշանակելու համար դիմել է հաշվառման օրվանից 3 ամիս հետո.

3) հաշվառման օրվանից, եթե անձը Հայաստանի Հանրապետությունում հաշվառվել է Ռուսաստանի Դաշնությունում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու (կենսաթոշակ չվճարելու) ամսվանից հաշված՝ 6 ամիս հետո և կենսաթոշակ նշանակելու համար դիմել է հաշվառման օրվանից հետո՝ 3 ամսվա ընթացքում.

4) դիմելու օրվանից, եթե անձը Հայաստանի Հանրապետությունում հաշվառվել է Ռուսաստանի Դաշնությունում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու (կենսաթոշակ չվճարելու) ամսվանից հաշված՝ 6 ամիս հետո և կենսաթոշակ նշանակելու համար դիմել է հաշվառման օրվանից 3 ամիս հետո:».

7) 45-րդ կետի 4-րդ ենթակետում «հաշմանդամություն սահմանելու մասին որոշումը վերադասության կարգով վերանայելու և անձին հաշմանդամ չճանաչելու մասին» բառերը փոխարինել «վերադասության կարգով կամ վերափորձաքննությանը անձին հաշմանդամություն ունեցող անձ չճանաչելու մասին» բառերով.

8) 46-րդ կետի 4-րդ ենթակետում «հասցեով հաշվառումից և մեկամսյա ժամկետում չի հաշվառվել» բառերը փոխարինել «հասցեի հաշվառումից» բառերով.

9) 47-րդ կետը «զինվորական ծառայության,» բառերից հետո լրացնել «բացառությամբ զորահավաքային զինվորական ծառայության ներգրավվելու կամ վարժական հավաքի կանչվելու դեպքերի,» բառերով, իսկ «քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «քննչական կոմիտեի ծառայողի (քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնի), հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի,» բառերով.

10) 52.5-րդ կետում՝

ա. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» բառերը փոխարինել «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» բառերով,

բ. 2-րդ ենթակետում «այդ» բառը փոխարինել «մահվան պետական գրանցման» բառերով.

11) 64.2-րդ և 68-րդ կետերում «մահվանից» բառերը փոխարինել «մահվան պետական գրանցումից» բառերով:

3. Որոշման N 3 հավելվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետը «պատճառով» բառից հետո լրացնել «կամ քրեական հետապնդումը դադարեցվել է քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ռեաբիլիտացնող հիմքերից որևէ մեկով» բառերով:

4. Որոշման N 10 հավելվածի՝

1) 5-րդ կետի 4-րդ ենթակետը «աշխատանքային գրքույկը» բառերից հետո լրացնել «եթե առկա չէ աշխատանքային գրքույկի՝ Միասնական սոցիալական ծառայության կողմից տեսաներածված տարբերակը, նոտարական կարգով հաստատված՝ աշխատանքային գրքույկի կրկնօրինակը կամ դրա քաղվածքը,» բառերով.

2) 19.1-ին կետի 3-րդ ենթակետը «Պետական պաշտոններ» բառերից հետո լրացնել «և պետական ծառայության պաշտոններ» բառերով.

3) 21-րդ կետի 1-ին ենթակետը «զինծառայողին» բառից հետո լրացնել «մահացած կամ» բառերով.

4) 28-րդ կետի 3-րդ ենթակետը «մահվան վկայականը» բառերից հետո լրացնել «(եթե քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված՝ մահվան ակտերի գրանցման վերաբերյալ տվյալներով անձի մահվան պետական գրանցումն առկա չէ):» բառերով:

5. Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ N 18 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան